



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2019 թվականի ապրիլի 30-ի 19-04-05-04 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգը կարգավորում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) գնահատված կարիքների համար կլինիկական օրդինատուրայում նպատակային ուսուցում կազմակերպելու հետ կապված հարաբերությունները:

2.Կլինիկական օրդինատուրայում նպատակային ուսուցումը կազմակերպվում է կլինիկական օրդինատորների համար ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում (զեղչ) կիրառելու ձևով՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտելուց հետո հիմնադրամի հետ կնքված պայմանագրին համաձայն, հիմնադրամի կողմից նախանշած ստորաբաժանումում կամ հաստատությունում որոշակի ժամանակահատվածում պարտադիր աշխատելու պայմանով: Սույն կանոնակարգը տարածվում է նաև երկրորդ մասնագիտությունը ստացող կլինիկական օրդինատորների նկատմամբ:

3. Հիմնադրամի կարիքները գնահատվում են ուսումնական տարին սկսելուց առնվազն տաս օր առաջ կամ ըստ անհրաժեշտության՝ հիմնադրամի ամբիոնների, այլ ստորաբաժանումների, հիվանդանոցային համալիրների ղեկավարների կողմից և համապատասխան զեկուցագրերի հիման վրա ներկայացվում հիմնադրամի հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտորին, որն էլ ամփոփելով դրանք, համապատասխան առաջարկություն է ներկայացնում ռեկտորին հրամանով սահմանելու տվյալ տարվա նպատակային ուսուցման տեղերը, մասնագիտությունները, հիմնադրամի կողմից սահմանված ստորաբաժանումում կամ հաստատությունում աշխատելու պարտադիր տարիների քանակը:

4. Սույն կանոնակարգի 3-րդ կետի համաձայն ներկայացված առաջարկության հիման վրա հիմնադրամի ռեկտորն ընդունում է հրաման:

2. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Կլինիկական օրդինատուրա ընդունվելու համար դիմած բոլոր անձանց մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի աշխատակիցները պարտավոր են տեղեկացնել նպատակային ուսուցման վերաբերյալ, ներկայացնել դրա կարգն ու պայմանները, թափուր տեղերը, ինչպես նաև կլինիկական օրդինատուրան ավարտելուց հետո առաջարկվելիք պաշտոնի ընդհանուր նկարագիրը և միջին աշխատավարձի չափը:

6. Եթե կլինիկական օրդինատուրա ընդունվելու համար դիմած անձը ցանկություն է հայտնում սահմանված կարգով կլինիկական օրդինատուրա ընդունվելուց հետո անցնել նպատակային ուսուցում, ապա կլինիկական օրդինատուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև համապատասխան համաձայնագիր նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրա ընդունվելու վերաբերյալ:

7. Եթե նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի թափուր տեղի համար դիմել է մեկից ավելի անձ, ապա ընդունելության համար նախապատվությունը տրվում է ամփոփիչ ատեստավորման արդյունքներով առավել բարձր միավորներ ստացած անձին:

3. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8.Նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրա ընդունված անձանց հետ հիմնադրամը կնքում է պայմանագիր՝ ըստ գնահատված կարիքների, ավարտելուց հետո երեք կամ հինգ տարի ժամկետով հիմնադրամի կողմից նախանշած ստորաբաժանումում կամ հաստատությունում աշխատելու համար: Պայմանագրում ներառվում են նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատորի և հիմնադրամի իրավունքները, պարտականությունները ուսման վճարի փոխհատուցման կարգը, պայմանագրի պահանջները խախտելու դեպքում վրա հասնող պատասխանատվությունը, ավարտելուց հետո առաջարկվող պաշտոնի ընդհանուր նկարագիրը, միջին աշխատավարձը, այլ անհրաժեշտ պայմանները:

9.Երեք տարի ժամկետով աշխատելու պայմանով ընդունված կլինիկական օրդինատորին տրվում է ուսման վարձի 50 տոկոս փոխհատուցում (զեղչ), իսկ հինգ տարի ժամկետով ընդունվածին՝ ուսման վարձի 100 տոկոս փոխհատուցում (զեղչ):

10. Նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրան ավարտած անձի հետ ավարտելուց առնվազն մեկ շաբաթ առաջ կնքվում է համապատասխան աշխատանքային պայմանագիր՝ աշխատանքային պայմանագրի գործողության սկիզբ սահմանելով կլինիկական օրդինատուրան ավարտելուն անմիջապես հաջորդող համապատասխան ժամանակահատվածը:

11.Նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրա ընդունված օրդինատորը ինքնակամ ուսուցումը դադարեցնելու կամ մասնագիտությունը փոխելու դեպքում պարտավոր է փոխհատուցել մինչև այդ պահը հիմնադրամի կողմից ուսման վճարի համար կատարված ծախսերը և վճարել տույժ այդ ծախսերի 30 տոկոսի չափով:

12. Նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրան ավարտելուց հետո աշխատանքային պայմանագիր կնքելուց հրաժարվելու կամ աշխատանքային պայմանագիրը գործողության ժամկետից շուտ սեփական նախաձեռնությամբ դադարեցնելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով աշխատանքից ազատվելու կամ աշխատանքային պայմանագրով (իրավական ակտ) նախատեսված այլ դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքերում, նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրան ավարտած անձը պարտավոր է փոխհատուցել հիմնադրամի կողմից ուսման վճարի համար ուսման ողջ ժամանակահատվածի համար կատարված ծախսերը և վճարել տույժ՝ այդ ծախսերի 50 տոկոսի չափով:

13. Նպատակային ուսուցմամբ կլինիկական օրդինատուրան ավարտած անձը սույն կանոնակարգի 11-րդ կամ 12-րդ կետով նախատեսված ծախսերը և տույժի գումարը չի վճարում՝

1) եթե հիմնադրամը հրաժարվում է կնքել աշխատանքային պայմանագիր.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

4) տվյալ հաստիքը զբաղեցնող նախկին աշխատակցին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքում վերականգնելու դեպքում:

Կատարող՝

Ռեկտորի խորհրդական՝ -----

Համաձայնեցված է՝

Պրոռեկտոր՝ -----

Ի.Աբգարյան

Գ.Ավետիսյան

Մասնագիտական և շարունակական

կրթության կենտրոնի ղեկավար՝ -----

Ս.Բաղդասարյան

Իրավաբանական բաժին -----